**Մրցույթ՝ ՀՀ Կոտայքի մարզի «Քասախի Ա. Հովհաննիսյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի երկու դասվարի (16 և 15 դասաժամ), քիմիայի (12 դասաժամ), պատմության (18 դասաժամ), աշխարհագրության (15 դասաժամ), ֆիզիկայի (14 դասաժամ), կենսաբանություն ( 13 դասաժամ), երկու ռուսաց լեզվի (22 և 9 դասաժամ), երաժշտության (6 դասաժամ), կերպարվեստի (6 դասաժամ), մաթեմատիկայի (25 դասաժամ), ինֆորմատիկայի (4 դասաժամ), տեխնոլոգիայի (5 դասաժամ), ֆիզկուլտուրայի (11 դասաժամ), ուսուցչի թափուր տեղերի համար**

Մրցույթն անցկացվում է է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրուցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3×4 չափի,
-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
-անձը հաստատող փաստաթուղթ,
-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճեն (առկայության դեպքում),
-ինքնակենսագրություն (Ձև 5),
-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
-ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
-որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները
համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են օգոստոսի 31-ից մինչև սեպտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ն, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **սեպտեմբերի 15-ին, ժամը՝ 14:00-ին** Քասախի Ա. Հովհաննիսյանի անվան №2 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ գ. Քասախ, Տերյան փողոց շենք 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 19 60 13 հեռախոսահամարին: